Հավելված №1
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
«26» 12 2024 թ.
№ 170 հրամանի

ՈՐԱԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) գործունեության հիմնական նպատակներից է նոր ստեղծվող տարանցիկ գազամուղների և գազի ստորգետնյա պահեստարանների նախագծման, կառուցման, շահագործման, շահագործման գծով ծրագրերի իրականացման, գործող գազամատակարարման և բաշխիչ ցանցերի շահագործման և ընդլայնման միջոցով բնական գազի հուսալի, անխափան և անվտանգ մատակարարման ապահովումն է:

Որակի քաղաքականության (այսուհետ՝ Քաղաքականություն) հիմքը կողմնորոշումն է մատուցվող ծառայությունների որակի նկատմամբ՝ ելնելով յուրաքանչյուր սպառողի պահանջմունքներից ու սպասելիքներից:

Ընկերության առաքելությունը նպատակաուղղված է առավել արդյունավետ, հուսալի ու անխափան գազամատակարարման ապահովմանը հանրապետության սպառողներին, ինչպես նաեւ՝ գազի շահագործման ու իրացման գործունեության արդյունավետության բարձրացման ճանապարհով, երկարատև ու համաչափ զարգացման ապահովմանը համակարգում:

Մատուցվող ծառայությունների որակը և որակի կառավարման համակարգի գործընթացները Ընկերության համար Հայաստանի Հանրապետության ներքին շուկայում բնական գազի իրացման շուկայի ընդլայնման գլխավոր պայմանն է, նաև՝ շահույթ ստանալու, Ընկերության տնտեսական վիճակի կայունացման և Ընկերության զարգացման հիմքը՝ ի շահ սպառողների, անձնակազմի, բաժնետերերի, մատակարարների և հասարակության:

Որակի Քաղաքականության հիմնական նպատակներն են.

Ապահովել.

-ԻՍՕ 9001:2015 միջազգային ստանդարտի պահանջներին համապատասխան որակի կառավարման համակարգերի ներդրումը, սերտիֆիկացումը և աշխատանքային վիճակում պահպանումը,

-Ընկերության գործունեության գործարար ոլորտներում որակի կառավարման համակարգի պահանջների ինտեգրումը,

-սպառողներին՝ գործող օրենսդրական ու կանոնակարգման պահանջներին համապատասխան ծառայություններ մատուցելու անընդմեջ ունակությունը,

- հնարավորություններ՝ մատուցվող ծառայություններից սպառողների բավարարվածության բարձրացման համար,

-Ընկերության նպատակների հետ առնչվող ռիսկերի ու հնարավորությունների նվազագույնի հասցնելը,

-սպառողների սպասելիք պահանջմունքներին համապատասխան ծառայությունների մատուցումը և դրանց առավելագույն բավարարումը,

-սպառողների շրջանում բարձր վարկանիշի նվաճումը և պահպանումը:

Նշված նպատակներին հասնելու պարտադիր պայմանները.

-որակի կառավարման համակարգի մշակում, ներդրում և արդյունավետ գործառնության ապահովում, աշխատանքային վիճակում պահպանում,

-որակի քաղաքականության մասին բոլոր աշխատողների իրազեկում՝ նպատակ ունենալով ապահովել նրանց ներգրավվածությունը որակի կառավարման գործընթացի մեջ,

-Ընկերության աշխատողների համար բարենպաստ աշխատանքային միջավայրի ստեղծում, խրախուսում և որակավորման անընդհատ բարձրացում,

-անձնակազմի ուսուցում,

-մարքեթինգային ուսումնասիրությունների իրականացում,

-արտադրության և տեխնոլոգիական միջոցների մշտական նորացում, կատարելագործում,

-մատուցվող ծառայությունների որակի ապահովում՝ անհամապատասխանությունների կանխման և բացահայտման նպատակով կանխարգելման առաջացման պատճառների վերացում,

-մատակարարների հետ փոխշահավետ հարաբերություններ՝ հիմնված փոխըմբռնման և համագործակցության վրա:

Ընկերության ղեկավարությունը ստանձնում է որակի կառավարման համակարգի քաղաքականության և նպատակների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների տրամադրման պարտավորություն և ելնելով իր մշակած Քաղաքականության դրույթներից՝ Ընկերության աշխատողներին, շահագրգիռ կողմերին ի գիտություն հասցնելը, ինչպես նաև՝ որակի կառավարման համակարգերի ապահովման և բարելավման նպատակով աշխատանքների կազմակերպումն ու կառավարումը:

Ընկերության Քաղաքականությունը տարածվում է իր բոլոր ստորաբաժանումների, այդ թվում՝ մասնաճյուղերի, ինչպես նաև հիմնարկների վրա: